

ՄԱԿ-ի ԵՏՀ/ԱՀԿ <<Ջուր և առողջություն>>  
արձանագրություն

Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման  
հավասար հասանելիության ապահովման համար 2018–  
2020 թվականների գործողությունների ծրագրի  
իրականացման առաջընթացը

*Արմինե Առուշանյան  
ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային կոմիտե  
2019թ. փետրվարի 19*

# Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման համար 2018–2020 թվականների գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը

Հայաստանը դեռ չի հանդիսանում ՄԱԿ-ի ԵՏՀ-ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի <<Ջուր և առողջություն>> արձանագրության կողմ երկիր:

*Հայաստանում ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ինքնագնահատումն իրականացվել է <<Ջուր և առողջություն>> արձանագրության ներքո, Ֆրանսիայի կառավարության աջակցությամբ, <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ի կողմից՝ ՀՀ ԷԵԲՊՆ Ձրային կոմիտեի համակարգմամբ:*

ՁՁՀՀ ինքնագնահատման քարտի մեկնարկային հանդիպումը տեղի է ունեցել 2015թ. դեկտեմբերին:

Ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության (ՁՁՀՀ) ապահովման երեք կարևոր գործոններն են՝ աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարաչափությունների նվազեցումը, խոցելի խմբերի առջև ծառայած խոչընդոտների հաղթահարումը և մատչելիության խնդիրների լուծումը:

ՁՁՀՀ ինքնագնահատման քարտը վերլուծական գործիք է և կարող է օգնել կառավարություններին և այլ շահագրգիռ կողմերին՝ սահմանել ջրի և ջրահեռացման հավասարաչափ մատչելիության ելակետային չափանիշը, բացահայտել հարակից առաջնահերթությունները, քննարկել հետագա ձեռնարկվելիք գործողությունները և ինքնագնահատման գործընթացի միջոցով գնահատել առաջընթացը:

Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման  
հավասար հասանելիության ապահովման համար 2018–2020  
թվականների գործողությունների ծրագրի իրականացման  
առաջընթացը

*Ինքնագնահատման քարտը ներառում է 4  
բաժին, որոնք բաժանված են  
գործողությունների ոլորտների:*

1. Ղեկավար կառավարման շրջանակներն անվտանգ խմելու ՋՋՀ ապահովման ոլորտում.

1.1 Ռազմավարական շրջանակը՝ հավասար հասանելիության հասնելու համար.

1.2 Սեկտորի ֆինանսական քաղաքականություն

1.3 Օգտագործողների և իրավատերերի իրավունքներն ու պարտականությունները

2. Աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունների կրճատում.

2.1 Պետական քաղաքականությունը

2.2 Գնային անհավասարությունների կրճատման պետական քաղաքականությունը

2.3 Սեկտորի համար արտաքին աջակցության աշխարհագրական տեղաբաշխումը

3. Հասանելիության ապահովում խոցելի և մեկուսացված խմբերի համար.

Ֆիզիկական հատուկ կարիքներ ունեցող անձիք

Առողջապահական, կրթական հաստատություններից օգտվող անձինք

Ծերանոցներից օգտվող անձինք

Բանտարկյալներ

Փախստականների ճամբարներում և կենտրոններում ապրող փախստականներ

Անօթևան մարդիկ

Մարդիկ, որոնք ապրում են ջրամատակարարումից և ջրահեռացումից զուրկ բնակարանային պայմաններում

Մարդիկ, որոնք իրենց աշխատավայրերում ապահովված չեն խմելու ջրի և ջրահեռացման հասանելիությամբ

4. Ջրամատակարարման և ջրահեռացման մատչելիության ապահովում յուրաքանչյուրի համար

4.1 Մատչելիության ապահովմանն ուղղված պետական քաղաքականությունը

4.2 Սակագնային միջոցառումներ

4.3 Սոցիալական պաշտպանության միջոցառումներ

# Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ինքնագնահատման քարտի արդյունքները

Ոլորտ	Առաջարկություններ
<p>Ղեկավար կառավարման շրջանակներն անվտանգ խմելու ջրի և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման համար</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Օրենսդրության ավելի մանրամասն վերլուծություն, դրական և բացասական կողմերի հայտնաբերում, ինքնագնահատման քարտի բաղադրիչների և օրենքների համադրություն՝ խնդիրների լուծման համար օրենսդրական բացթողումների բացահայտման նպատակով</li> <li>• Շահառու նախարարությունների կողմից «ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության» բաժնի ներառում, ինչպես նաև հաշվետվություններում ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ աշխատանքների և ծախսված ֆինանսական միջոցների առանձին ներկայացում</li> <li>• Ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության ապահովման գործողությունների պլանի մշակում և կառավարության կամ շահառու նախարարությունների կողմից հաստատում</li> </ul>
<p>Աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունների կրճատում</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ջրամատակարարման և ջրահեռացման մասնագիտացված ծառայությունների սպասարկման տարածքից դուրս մնացած համայնքների առկա իրավիճակի մասին տեղեկատվության հավաքագրում</li> <li>• Ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում՝ հատկապես ուշադրության կենտրոնում պահելով տարածքային բաշխվածությամբ պայմանավորված անհամաչափությունները</li> <li>• Ջրամատակարարման և ջրահեռացման մասնագիտացված կազմակերպությունների սպասարկման տարածքից դուրս մնացած մոտ 570 բնակավայրի՝ ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքում ընդգրկելու դրդապատճառների գնահատում</li> <li>• Ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակում՝ թե՛ սպասարկվող և թե՛ չսպասարկվող համայնքներում</li> <li>• Ներդրումային ծրագրերի մշակում և, հնարավորության դեպքում, ըստ գերակայությունների դրանց իրականացում այն համայնքներում, որտեղ ջուրը բերովի է կամ ապահովված չեն բաշխիչ ցանցով կամ էլ բացակայում է կոյուղու համակարգը</li> </ul>
<p>Հասանելիության ապահովում խոցելի և մեկուսացված խմբերի համար</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Խոցելի խմբերի ջրամատակարարման և ջրահեռացման իրավունքների օրենսդրորեն ամրագրում ոլորտի մշակվող քաղաքականության մեջ</li> <li>• Պիլոտային ծրագրի իրականացում՝ ըստ ինքնագնահատման քարտի բաղադրիչների, ինչպես օրինակ՝ աշխարհագրական դիրքով պայմանավորված առանձին խոցելի խմբերի առանձնահատկությունների հայտնաբերում</li> <li>• Ինժեներահիդրոլոգիական ուսումնասիրության իրականացում՝ նպատակ ունենալով ջրամատակարարման հասանելիությունն ապահովել հարևան թաղամասերից, որտեղ ջրամատակարարումը հասանելի է</li> <li>• Ջրամատակարարումից և ջրահեռացումից գուրկ բնակարանային պայմաններում ապրող մարդկանց մասով իրավիճակի գնահատում և բարելավման ծրագիր-առաջարկի մշակում</li> <li>• Ջրամատակարարման և ջրահեռացման հասանելիության նկատմամբ մարդու իրավունքի վերաբերյալ հանրային իրազեկում</li> </ul>
<p>Մատչելիության ապահովում խոցելի և մեկուսացված խմբերի համար</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Սակագների միջոցով մատչելիության խնդիրների լուծման տարբերակների ուսումնասիրության իրականացում</li> </ul>

## *Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության գործողությունների պլան, 2018-2020*

- **Նպատակը** - սահմանել ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների, դրանց գնահատման չափորոշիչների, իրականացման պատասխանատուներին, համակատարողների և ֆինանսավորման աղբյուրները:
- **Մշակման գործընթացը** - Իրականացվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից, ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի համակարգմամբ, ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարության աջակցությամբ, Շանտալ Դեմիլեկամս և Ռոբերտո Մարտին - Հուրտադո:
- **Ժամանակահատվածը՝** 01.12.2016- 01.05.2017

## Հայաստանում ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման համար 2018–2020 թվականների գործողությունների պլան

- **Մեկնարկային հանդիպում** - 2017 թ. ապրիլի 7-ին , ԵՄ ջրային նախաձեռնության շրջանակներում իրականացվող ջրօգտագործման, ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում ԱԲԵ հանձնախմբի նիստում:
- **Հանրային քննարկում** – 2017թ. մայիսի 12-ին, <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ:
- **Շահագրգիռ կողմեր** - Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ՀՀ առողջապահության , ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ բնապահպանության , ՀՀ կրթության և գիտության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե, մասնավոր սեկտոր, ջրամատակարար ընկերություն:

## *Բաժին 1. ՉՉՀՀ ապահովման արդյունավետ կառավարում (օրենսդրական և ֆինանսական կառավարում)*

- ՉՉՀՀ ապահովման նպատակով ջրային օրենսդրության վերլուծություն և խոչընդոտների վերհանում
- Օրենսդրական բարեփոխումների իրականացում՝ ՉՉՀՀ-ի ապահովման հայեցակարգի նախագծի մշակում
- ՉՉՀՀ հայեցակարգի պահանջների ապահովման համար կլոր սեղանի կազմակերպում
- ՉՉՀՀ հայեցակարգի կիրարկման գործընթացում հանրային մասնակցության ապահովման ձևաչափի ընտրում և կիրառում
- ՉՉՀՀ հայեցակարգի կիրարկումն ապահովող անհրաժեշտ ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների գնահատում (աղբյուր, ֆինանսական ծավալ)



## *Բաժին 2. ՉՉՀ ապահովման աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարությունների կրճատում*

- Ջրամատակարարման և ջրահեռացման մասնագիտացված ծառայություններ մատուցող ընկերության (ների) կողմից չսպասարկվող համայնքների իրավիճակի մասին տեղեկատվության հավաքագրում և տեղեկատվական բազայի ստեղծում
- ՉՉՀ-ի ապահովման աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարաչափությունների կրճատմանն ուղղված միջոցառումների պլան-ժամանակացույցի մշակում՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի ԿՁՆ 6.4. կետը
- Ջրամատակարար ընկերության (ընկերությունների) կողմից չսպասարկվող համայնքների ջրամատակարար ման համակարգերի փուլային բարելավում՝ հետագայում մասնագիտացված կազմակերպությունների կողմից սպասարկման ապահովմամբ
- Գործող և պլանավորվող, զարգացման, ներդրումային, քաղաքաշինական, կրթական պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման ընթացքում ՉՉՀ ապահովմանն (այդ թվում աշխարհագրական դիրքով պայմանավորված անհավասարության կրճատման և խոցելի ու մեկուսացված խմբերի ապահովման) ուղղված չափանիշների ընդգրկում

### *Բաժին 3. ՉՉՀ ապահովում խոցելի և մեկուսացված խմբերի համար*

- Խոցելի և մեկուսացված խմբերի համար ՉՉՀ վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և տեղեկատվական բազայի ստեղծում
- Խոցելի և մեկուսացված խմբերի վրա ներկայիս ջրամատակարարման և ջրահեռացման սակագների ազդեցության գնահատում
- Խոցելի և մեկուսացված խմբերի համար ՉՉՀ-ի ապահովման դիմաց նախընտրելի սակագնի փոխհատուցման մեխանիզմի մշակման նպատակով կլոր սեղանի կազմակերպում

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ**

**ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶՐԱՄՍԱՏ ԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԶՐԱՀ ԵՌՄՅ ՄԱՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՄԱՆԵԼԻ ՈՒԹՅԱՆ ԱՊԱՀ ՈՎՄԱՆ 2018-2020թթ.**

Միջոցառումներ	Ակնկալվող արդյունքը	Միջոցառման կատարման չափանիշ	Ժամկետը	Համակարգող / Պատասխանատու	Համակատարողներ	Ֆինանսավորման աղբյուրը	Գնահատված մոտավոր բյուջե
<b>Բաժին I. Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման արդյունավետ կառավարում</b>							
<i>1.1 Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման արդյունավետ կառավարման օրենսդրական և քաղաքական հիմքերը</i>							
ՋՋՀՀ ապահովման նպատակով ջրային օրենսդրության վերլուծություն և խոչընդոտների վերհանում:	ՋՋՀՀ օրենսդրության բարեփոխումներ:	Օրենսդրական բարեփոխումների առաջարկությունների փաթեթ:	01.05.2018 թ.	ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախ-ն, ՀՀ առողջապահության նախ-ն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ բնապահպանության նախ-ն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախ-ն, ՀՀԿԱ քաղ. պետական կոմիտե, մասնավոր սեկտոր	Միջազգային կազմակերպություններ, ՀՀ կառավարություն՝ ոչ ֆինանսական միջոցներ (աշխատանքների, կառավարման մարմինների մասնակցության ապահովում, ըստ անհրաժեշտության կլոր սեղանի վարում)	25.0 մլն. ՀՀ դրամ

*ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ*

*ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*